

ՔԱՅԱՆԱՆԵՐԻ ՆԻԻԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ա.

Ահա մի խնդիր, որ միշտ թարմ է և չէ հնանում։ Քահանայական հարցը միշտ գրաւել է մեր ազգի լաւագոյն անդամների ուշադրութիւնը նոյն իսկ քրիստոնէութեան առաջին դարերից սկսած. Հայաստանի նախկին և կրկին լուսաւորիչները այդ պաշտօնի կոչեցին ազգի ընտրեալ անձինքներին. նոցա յաջորդ հայրապետներն իրանց հոգսերից գլխաւորագոյնը համարում էին քահանայական ընտրութեան խնդիրը և այդ էր պատճառը, որ ազգային եկեղեցու կանոնագրի մէջ մտան անհամար կանոններ, որոնցով սահմանուում էին քահանայացուի ընտրութեան համար որոշ և վճռական օրէնքներ և գծուում էր այն շրջապատը, որոնցից դուրս գալ իրաւունք չունէր ոչ ընտրող ժողովուրդը և ոչ իսկ ձեռնադրող եպիսկոպոսը։ Այդ կանոններից ամենագլխաւորները, առաւել պարտադիր անելու համար, մտցուեցան նաև Հայաստանեայց եկեղեցու Մայր Մաշտոցի մէջ 'ի հրահանգութիւն ձեռնադրողների ¹⁾։

1) „Շախսկուպոսը... ձեռնադրում է արժանաւորներին, որոնք հասուն եւ գիտնական են զրոց կարգերին եւ Աստուծոյ օրէնքներին. եւ տգէտներին չպէտք է ձեռնադրել, որովհետեւ տգիտութիւնը ատելի է Աստծուն, ինչպէս շարագործութիւն“։ այսպէս է որոշում Թաղէոս առաքելու Մահմանքը, որ մեր եկեղեցու կանոնագրքի Նախադրումն է կազմում։

Չնայելով, որ ազգի կենսական պահանջները ստիպել էին մեր եկեղեցու հովուապետներին այսպիսի խիստ միջոցների դիմել ամեն տեսակ կամայականութեան վախճան դնելու համար, այնուամենայնիւ գեղծումը միշտ տեղի ունէր նոյն իսկ այն ժամանակ, երբ ազգային դըպրութեան տեղի տալով օտար ուսումը՝ ազգի ինքնաճանաչութիւնը իւր գազաթնակէտին էր հասել. այլապէս մեր անմահ պատմահայր Մովսէս Խորենացին ստիպուած չպիտի լինէր իւր յայտնի «ողբի» մէջ մի մեծ տեղ տալու ժամանակակից քահանաների ողբալի վիճակին:

Եթէ «մսկէ դարում» այդքան կարևորութիւն ունէր քահանայական խնդիրը, շատ հասկանալի է, որ յաջորդ դարերում և մինչև այժմ էլ հայ ժողովրդի կեանքում ամենալուրջ կենսական խնդիրներից մինն եղել է և է այդ խնդիրը, որ հետզհետէ աւելի կարևորութիւն է ստանում, քանի որ ազգայնութեան գաղափարը արծարծուելով ըզգացւում է նաև բանիբուն հոգևորականների կարևորութիւնը, որոնց մեծ նշանակութիւնը ոչ ոք չէ ուրանում այլ ևս:

Չատ պատճառներ կան, որոնք արգելք են լինում քահանայական խնդրի լուծման, բայց մենք ներկայումս նպատակ ունինք խօսել նոցանից ամենագլխաւորներից մէկի մասին և դա նոցա նիւթական ապահովութեան խնդիրն է:

Հասարակաց կարծիք է, թէ հոգևորականներն առհասարակ ապահով վիճակ ունին. արդարև մեր քահանաների մի մասը ապահով վիճակ ունի և մենք կը շեշտենք որ աւելի ապիկար մասը և սա ունի իւր խորունկ պատճառները. պատճառներ, որոնց լարերին ձեռը տուողները «անձանց դատաստանս ընդունին». բայց կփորձենք այդ պատճառներից գէթ մի քանիսը շօշափելու քաջութիւնը ունենալ:

Կար ժամանակ և մեզանից շատ հեռու չէ այդ ժամանակը, երբ հայոց մէջ կրթութիւնը սկսուում էր «Այբօժէ-ճէռայով» և վերջանում «Յայսմաւուրքով»։ այդ մետողին ասում էին «խալիֆայութիւն»։ անցաւ այդ ժամանակը։ Քայց «խալիֆայական» մետողին կից զուգընթացաբար գոյութիւն ունէր «մոնթական» մետողը. սա նոյնն էր քահանայութեան համար, ինչ որ «խալիֆայութիւնը» ազգային կրթութեան. պարզենք ընթերցողին «մոնթական սիստէմը»։

Մի վարդապետի մօտ ծառայում էր մէկը, որ իւր սպասահարկութեանց հետ միասին կարդալ գրել էր ուսանում նորա մօտ, նա մոնթ էր. միւսը դուրս էր եկել ծխական կամ թեմական դպրոցի ստորին դասարանից. բաղտը նորան խանութներում կարճատև աշկերտութիւնից յետոյ ձգել էր ուղղակի հայ եկեղեցին, նա շուրջառը ձեռին գնում էր ծերունի քահանայի հետ օրինակատարութիւնների, քահանայի, որ հարուստ ծխի տէր էր. նա ծառայում էր տէր հօր տանը, նայում էր նորա երեխաներին, գնում էր առուտուրի, գնածները տուն էր բերում և այլն և այլն. նա էլ մոնթ էր, բայց մոնթը միաժամանակ սովորում էր նաև փոխ ասել և այդ բաւական էր նորան որպէս գիտութիւն, հարկաւոր էր նաև գործնական կեանքին վարժուիլ, որ պակաս նշանակութիւն չունէր մոնթի ապագայի համար. նա արդէն իւր ծառայութեամբ գրաւել էր իւր քահանայի համակրութիւնն ըստ ամենայնի. իսկ միւս կողմից նա սկսել էր սովորել տէր հօր ծխերի տները. նա տեսնում էր թէ ինչպէս է տէր հայրը ծուխ ձեռք բերում. իւրացնում էր այդ միջոցները, որոնք կարևոր էին նորան ապագայում. ժամանակի ընթացքում նա ծանօթանում էր այդ ծխի հետ. խոնարհում նոցանից ազգեցիկների առաջ. ծուխը սովորում էր փոքր առ փոքր նայել նորա վերայ ինչպէս տան բարե-

կամի, «տանու որդու» վերայ. և ահա մոնթն սկիզբն էր դրել ծերունի հօր ապագայ յաջորդը լինելու. հոգն արդէն պատրաստ էր, խիստ արգաւանդ հող, վարած ու ցանած, ժամանակի կարօտ միայն որ ծիլեր արձակէր. և հասնում էր այդ ժամանակը. — երբ այլ ևս չկար ծերունի քահանան, մոնթի ժամը զարկած էր արդէն, նա չափահաս է. ամուսնացել է այդ ծխի ազդեցիկ անդամներից մէկի դստեր հետ, ուրեմն հիմքն արդէն ապառաժի վերայ էր դրուել. մի որ և է քսան և չորս ժամ չք բոլորած... մոնթը ժողովրդականաց խնդրագիրը լիովն ստորագրութիւններով, ծխի քանի մի ազդեցիկներին առաջը գցած որպէս պատգամաւորներ՝ ներկայանում էր ուր հարկն է:

Եւ ահա մեր մոնթը դառնում էր այդ ժողովրդի հայրը. նա ունէր այն ամեն ղէնքերը, որոնք անհրաժեշտ են ապրելու համար — ծուխ գրաւելու միջոցները և նորանից շահուելու եղանակը..., ուրեմն և նիւթապէս նա կատարեալ ապահով վիճակ ունի, և յարգուած էր այդ ծխից իբրև «տանու որդի», իբրև արժանաւոր հայր:

Ասացինք, որ նորան յայտնի էին ծուխ գրաւելու միջոցները և այդ տեղից առաջանում էր մի արշաւանք, որ կոչւում է «ծուխ խլեր». բաղտաւոր է նա, ով աւելի ճարպիկ է այդ գործում, «որքան հատանէ, այնքան ունի». վայն եկել է անշնորհին. այդպիսով մէկին յաջողում է իւր ծխերի թիւը երեք կամ չորս հարիւրի հասցնել, իսկ միւսինը իջնում է մինչև... քառասուն և աւելի պակաս և այն՝ չքաւոր դասակարգից միայն:

Թերթենք այժմ գրքի միւս երեսը: Յայտնի է, որ վերջին մի քանի տասնեակ տարում մեր թեմական դպրոցներն սկսեցին մի աննշան տոկոս քահանաներ տալ ռուսահայերին. այսօր գոյութիւն ունին մի բուն միջնակարգ կրթութիւն ստացած քահանաներ, որոնք որոշ կրք-

Թուլթեան հետ հարկաւ ուսել են նաև մի որոշ աստի-
ճան բարձր պահել իրանց կոչումն և անձնական արժա-
նապատուութիւնը. նոքա չեն կարողանում մինչև գետին
խոնարհել ամեն մի ծխականի առաջ... մի քանի կողէկ
աւելի ստանալու նպատակով, ամօթ են համարում զա-
նազան ստոր միջոցներով ծռլա գրաւել և յաճախ իրանց
այդպիսի վարմունքով առիթ են տալիս ծխին խորշիկ,
հեռանալ իրանցից: Ասացինք, որ ծուխը ինքն էլ դեռ
իւր դարաւոր աւանդութիւններից չէ սթափուել: Նա էլ
դեռ սովոր է իւր առաջ խոնարհած տեսնել քահանային,
որին իւր տուածը ողորմութիւն է համարում. իսկ յայտնի է,
որ մենք սիրում ենք աւելի շահել այն աղքատին, որ ա-
ւելի շողորթել գիտէ մեր ետը, մեր շունեցած բարե-
մասնութիւնները, ուրեմն նա իւր ողորմութիւնը կտայ
նորան, ով աւելի է շոյում, ով աւելի է հաճոյանում նորան:

Այսպիսով վերջինս ստեղծում է իւր համար հաճոյա-
կան և ապահով դիրք, որին դժոխքի դռները չեն կարող
սասանեցնել և որը կրծում է քահանայական վիճակի բա-
րելաւութեան հիմքը:

Իրերի այս դրութիւնը ծնում է մի անհաւասարու-
թիւն, մի պատնէշ մոնթ և դպրոցական քահանաների
մէջ. մոնթը միշտ ապահոված ընտիր ծխով, իսկ դպրո-
ցականը միշտ չքաւոր. դորան հետեւում էր և մի խուլ
կռիւ դոցա մէջ, որ անհաւասար ոյժերի մէջ լինելով ան-
զօր է մի բարոյական յեղափոխութիւն առաջացնելու, բայց
մի օր պիտի ժայթքէ և կը ժայթքէ անշուշտ. ժամանա-
կը առաջ է գնում և նորա հետ առաջ է գնում ամեն ինչ,
լուսամիտ գաղափարներ պատուաստում են հայ հողի
վերայ. միայն քահանայական դասն էր, որ յետ էր մը-
նում և յետ մնալու պատճառներից ամենազլխաւորը մենք
համարում ենք այն հանգամանքը, որ այդ դասակարգը
չէ նորոգւում նոր ոյժերով, որոնք օժտուած լինին հայ:

եկեղեցու վարդապետութեան ուսմունքներով և ժամանակակից գիտութեան պաշարով:

Այն ինչ առաջուան «լափշլիք» հաղնողը այսօր արտասահմանի նրբակար կօշիկ է հաղնում, նախկին «արխալուխ» հաղնողը այժմ նորաձև և ընտիր գործուածքից պատրաստած բաճկոն է կրում, մորթի գլխակ ծածկողը ընտիր ցիլինդր է դնում և խրճիթում ապրողը՝ գեղեցկաշարմար բնակարաններումն է հանգչում ընտիր ճաշակով կահաւորուած սենեակներում: Այսպէս էլ մեր «դալլաքը» պարիկմախէր է դառել, «խարաղին» փոխարինել է կօշկի ևրոպական գործատունը, «խարշուխիկին» համեղաճաշակ խորտիկ պատրաստող խոհարարը, բայց մենք քահանայացուից սովոր ենք պահանջել դարձեալ նոյն սահմանափակ ուսմունքները, որոնք բաւական էին համարուած դարերով առաջ: Այն, քահանայական դասը չէ ընդունում իւր մէջ նոր տարր, նա նոյն լճացած դրութիւնն է ներկայացնում, ինչ որ դարերով առաջ և մենք բաց աչքով տեսնում ենք այն խրամատը, որ կայ, օրինակ, արևմտեան եկեղեցու հոգևորականների և մեր քահանաների մէջ. — մէկում կրթութեան և զարգացման յառաջամարտիկներ, միւսում անյատակ տգիտութիւն, մէկում հայրենեաց անհուն սէր, միւսում դատապարտելի անտարբերութիւն դէպի ամեն ինչ:

Ովքեր առիթ են ունեցել ներկայ լինելու եւրոպական քաղաքների եկեղեցիներում կատարուող ժամերգութիւնների, լսել են նոցա քահանաների քարոզները, հարկաւ գիտեն, թէ որպիսի չնաչխարհիկ վեհութիւն ունին մեր պաշտամունքն ու երգեցողութիւնքը նոցա հետ համեմատելով, կարծես երկնքից լինին ներշնչուած. բայց ի՞նչպէս ներդաշնակ և կարգին է ամեն ինչ նոցա մօտ. ի՞նչ ոգևորութեամբ է խօսում քահանան տաճարում, և ինչ գերեզմանական լուսութեամբ լսում է նորան ժողո-

վուրդը. բայց ժողովուրդ չի կարելի անուանել նոցա, վասնզի եկեղեցու յատակը [թոււմ է մարդկային գլուխներից կազմուած, այնպիսի բազմութիւն է լինում ժողովուած. զանազան աստիճանի և դասակարգի անձինք, հարուստ և աղքատ, տգէտ ու գիտուն, ամենքն անխտիր լցուել են եկեղեցին. նայեցէք այն գիտնականին, որի անուան առջև հեռուից խոնարհում է ամբողջ աշխարհը. ինչպէս վիզը ծուած կանգնած է եկեղեցում, հետևում է ժամերգութեան, ինքն էլ հետը երգում է և մրմնջում և լսում քահանայի ճառը. և մեր առջև վերստին պատկերանում է այն վիհը, որ կայ հայ և եւրոպացի քահանաների մէջ, վիհ, որ քանի գնում այնքան աւելի խորունկ է դառնում:

Մենք սովոր ենք շարունակ զանգատուել, թէ մեր ժողովուրդը եկեղեցի չէ յաճախում, իսկ եկողներն էլ դաւթումն են միայն մանգալիս. բայց ինչն է որ այդպէս համախմբում է եւրոպացուն իւր եկեղեցում, ո՞վ է այն դիւթիչ ոյժը, որ գիտէ ջերմացնել հաւատացեալների սրբաեղբր դէպի «Աստուծոյ տունը», — քահանան է այն, որի դիրքը, կրթութիւնը և եկեղեցում տիրող ամենախիստ կարգապահութիւնը մագնիսի նման դէպի ինքն է գրաւում ամենին, մի բան, որ մեզ պակասում է գլխովին և որ չէ ձեռք բերւում հոգևոր իշխանութեան հրամաններով, այլ հմուտ, գիտութեան տէր և շնորհալի քահանաների ձեռքով, որոնք ընդունակ պիտի լինին հոգևոր իշխանութեան բարի հրամաններն իրականացնելու:

Մենք եկանք դարձեալ այն եզրակացութեան, որ նախ և առաջ անհրաժեշտ է քահանաներ ունենալ և ապա նոցանից պահանջել այդ ամենը. բայց մենք երբէք չպէտք է ունենանք ցանկացած պատրաստութեամբ քահանաներ, եթէ ներկայ աւանդական դրութիւնը պահենք, եթէ մենք թողնենք քահանային այն դրութեան մէջ, որ

Նա փոխանակ իւր ժամանակի մեծագոյն մասը իւր իսկական կոչման ծառայեցնելու, գործ դնէ օրական հացի ապրուստը հայթայթելու զանազան ասպարէզներում, մէկը այս, միւսն այն, մէկը վաշխառութեան, միւսը արհեստների, անասնապահութեան և պարտիզականութեան, մակլէրի և կապալառութեան..., քանի որ ողորմութեամբ ապրուստ հայթայթելուն ամեն մարդ ընդունակ չէ և քիչ շատ զարգացած մարդ պատիւ չէ համարում իւր համար տոյգիսի միջոցներով ապրելու:

Այն, ոչ մի պատուաւոր մարդ չի ցանկալ կամաւոր ողորմութեամբ ապրելու անախորժ կեանքին մատնել իրան. զարգացած մարդը, որքան էլ գաղափարական լինի, երբէք չի յանձն առնիլ մի շարք ինվալիդներ ստեղծել ազգի համար իւր գաւակներէց: Պէտք է ուրեմն ամենից առաջ մի որոշ դրութիւն ստեղծել, որի հրապոյրը դէպի ինքը ձգէ շնորհալի մարդկանց, պէտք է այն վիճակի մէջ դնել քահանային, որ ստիպուած չլինի իւր ժամանակի մեծ մասը հացի խնդրին զոհելու: Քահանան իւր ժողովրդի հետ դրամական կապեր չպէտք է ունենայ. սխալ է այն կարծիքը, թէ քահանան միշտ ժողովրդի վերայ պէտք է ունենայ իւր աչքը. դորանով նա սովորում է շողորորթութեան, շահասիրութեան, ազահութեան և այլն և այլն. բացի սոցանից. վարձատրութեան այդ ձևը առիթ է լինում անհաշիւ տժգոհութիւնների և դժտութիւնների. արդէն հոգևոր իշխանութեան դիւանների մի ստուար մասը այդ տեսակ բողոքների գրագրութիւններից է բաղկացած. մենք ամենքս ամեն օր ականատես ենք քահանայի և տիրացուի, քահանայի և երեցփոխանի, վերջինների և ժողովրդի այս ու այն անհատի մէջ տեղի ունեցող անբաւականութիւնների, յաճախ սուր բնատրութիւն կրող, որոնց բոլորի պատճառն էլ մէկ է. — արդիւնքի անկանոն ստացման խնդիրը. և մենք մեր բազ-

մամեայ պաշտօնավարութիւնից փորձով գիտենք, որ հոգևոր ատեանների գործունէութիւնը կիսով չափ այդ խնդիրներն են զբաղեցնում:

Չմոռանանք յիշել նաև մի հանգամանք, որ պակաս անպատուաբեր չէ թէ քահանայի, թէ ժողովրդի և թէ այն «Տան» պաշտաման համար, որի Մեծ Տէրը խարազանով դուրս արեց այնտեղից զոլոր հատավաճառներին և լուսմայափոխներին: Մեր խօսքը գանձանակի շրջեցման մասին է, որի չխկչխկոցը սուրբ խորհրդի ամենավեհ, ամենանուիրական մասերում, ուր ժողովրդի մրմունջները վեր պիտի ուղղուէին Ամենազաւր գահոյքի առաջ, մի վայրկենում երկնայինը երկրաւորի է փոխանակւում, և մշտամուռնչ աղօթողը դժգոհութեան մրմունջը շրթունքին՝ ձեռքը անզգայապէս գրպանն է իջեցնում...

Աւելացրէք սորա վերայ և այն, որ՞ մոմավաճառութեան սեղանները, որոնք անհրաժեշտապէս եղեղեցու դուրսը պիտի լինին, լրացնում են այդ անպատեհութեանց թերին: Աւելացրէք և այն տգեղ նորամուծութիւնը, որ հանդիսաւոր տօներին քահանան, իւր սրբազան պաշտօնը թողած, ժողովրդի մէջ շրջելով մոմ է բաժանում նորան, որով միանգամ ևս վկայում է Փրկչական վերոյիշեալ վարմունքի արդարութիւնը:

Այս ամենը ոչինչ վերաբերութիւն չունին Հայաստանեայց եկեղեցու ամենամաքուր վարդապետութեան հետ, ուրեմն և փոփոխելի են. հետևապէս այս ամենին կարելի է և պէտք է վերջ տալ. ուրեմն արժանաւոր քահանաներ ունենալու համար պէտք է նոցա դրութիւնը ապահովել մշտական արդիւնքով, պէտք է նոցա Պարզիւնքները որոշ սիստեմի վերածել, պէտք է նոցա ռոճիկ տալ:

Բ.

Քտհանայից ռոճկի խնդիրը նոր չէ. մեր երանելի հայրապետները քահանաներ ձեռնադրելով նոցա «թոշակ» էին կապում. այդ թոշակը երբեմն վիճում էր ուղղակի արքունի դանձարանից, իսկ ըստ մեծի մասին համայնքներից, որոնց հետքը մինչև այժմ ևս մնացած է ժողովրդի մէջ: Իսկապէս ռոճիկը այժմ ամենուրեք գոյութիւն ունի հայ գիւղերում. «կալահացը» մի տեսակ ռոճիկ է գիւղական քահանայի համար, և բացի կալահացը նորա ստանում են և՛ «վարելահող», որպիսի արդիւնքները դարուս մէջ աւելի օրինականութիւն ստանալով ուղղակի մտան այն համախօսականների մէջ, որ կազմում են գիւղական համայնքներից քահանայացուի ընտրութեան վերաբերութեամբ և գիւղական քահանան գիտէ, եթէ ոչ մատեմատիքական ճշտութեամբ, գոնէ մօտաւորապէս, իւր տարեկան արդիւնքի քանակութիւնը և ըստ այնմ չափում է իւր տնտեսութիւնը:

Ուրեմն իսկապէս խնդիրը վերաբերում է քաղաքների և գիւղաքաղաքների և դորանով գործն առաւել թեթեւանում է, դուրս գալով բարդութեան սահմանից, թէպէտև քաղաքներից էլ արդէն օրինակներ ունինք, ուր ռոճիկը de facto գոյութիւն ունի. մայրաքաղաքների ամբողջ հայ հոգևորականութիւնը, ինչպէս նաև օտարերկրեայ հայ գաղութների հովիւները ստանում են կանոնաւոր ռոճիկ, բնակարան և դեռ ամեն ծիսակատարութիւնից էլ առանձին արդիւնք:

Այժմ հարց է, թէ ինչպէս կարելի է կարգադրել ռոճկի խնդիրը, որ ոչ ժողովրդի վերայ ծանրանայ և ոչ հոգևոր իշխանութեան համար դժուար դրութիւն ստեղծէ:

Չատ անգամ է խօսուել այդ մասին մեր պարբերական մամուլի մէջ և միշտ առանց հետևանքի: Նոցա մէջ

առանձին կերպով աչքի է ընկնում իշխ. Կոստ. Բեհբուդեանցի «Արձագանք» քրագրի 1892 թ. համարներում հրատարակած մի շարք յօդուածները «ծխական հոգաբարձութեան կազմակերպութեան մասին», որոնց մենք հոգով չափ համակրելով՝ իւր ժամանակին հրատարակեցինք առանձին գրքոյով, ցանկալով օր առաջ իրականացած գտնել յարգելի իշխանի առաջարկութիւնները մեր հասարակութեան մէջ և որոնց մէջ մենք գտնում ենք մեր ենթադրեալ հարցի լիակատար պատասխանը:

Ամենից գործնական միջոցը, որով կարելի է միանգամ ընդ միշտ վերջ տալ քահանայական զանազան անորոշ արդիւնքների ստացման անախտոթ եղանակին, այդ «ծխական հոգաբարձութիւններ» կազմակերպելն է, որոնց իրաւանց սահմաններում մտնում է նաև «աշխատելը, որ ծխի հոգևտրական դասը վայելէ ըոյր Ֆիրեն յատկացուած ապրուստի միջոցները, իսկ 'ի դէպս այդ միջոցների պակասութեան՝ հնարներ մտածուին այդ միջոցներն աճեցնելու». և «եկեղեցական պաշտօնեաների հաճար տներ շինել». ծխական հոգաբարձութիւնը այդ «ապրուստի միջոցները» աճեցնելով և ստանալով միջոց կունենայ ուճիկ յատկացնել եկեղեցական բոլոր պաշտօնեաներին:

Բայց ծխական հոգաբարձութիւնները օրինական կազմակերպութիւններ պիտի ունենան, որին գուցէ երկար տարիներ ստիպուած կլինինք սպասել. ուստի և մենք գալիս ենք առաջարկել, իբրև ժամանակաւոր միջոց, այն եղանակը, որ տակաւին 1886 թուին, սորանից ճիշտ տասն տարի առաջ, պաշտօնական գրութեամբ առաջարկել ենք թեմիս նախկին սրբ. Առաջնորդին:

Ի պաշտօնէ նկատած լինելով հարսանիքի արարողութիւնից առաջ եկեղեցում պսակող քահանայի և փեսացուի միջև տեղի ունեցող միջադէպերը՝ մենք առա-

ջարկել էինք տնօրինել, որ երբ պսակուողը ներկայանում է հոգևոր Ատենին պսակի իրաւունք ստանալու՝ այնտեղ իսկ մի յատուկ մասնաժողովի վերայ պարտք լինէր դըրուած պսակի՝ քահանաներին պատկանած արդիւնքն ստանալ, որպէս զի պսակուողները հանգիստ խղճով ներկայանային Աստծու սեղանի առաջ իրանց ուխտը կնքելու:

Մեր ներկայ առաջարկութիւնը վերաբերում է ամեն տեղին, բայց կարելի է նախ իբրևկիորձ իրագործել Տըվիխիսում, որտեղից ապա կարող է տարածուել դաւառական քաղաքները:

Նախապէս մենք կ'որոշենք, թէ որո՞նք են ներկայումս քահանայական արդիւնքները և ապա մեր առաջարկութիւնը կանենք, թէ ինչով ենք փոխարինում նոցա:

Քաղաքի քահանաներին յատկացրած են հետեւեալ որոշ և գլխաւոր արդիւնքները.

1, Կամաւոր տուրք մկրտութեան համար, որ վճարում է կնքահայրը. պէտք է ասել, որ մի մեծ անյարմարութիւն է ներկայացնում, մանաւանդ չքաւոր դասակարգի համար, երբ այդ ծախքը հոգում է կնքահայրը. յաճախ նորածին մանուկը երկար ամիսներով և երբեմն նաև... տարիներով անկնունք է մնում, որովհետև այդ ծախքերից փախչելով շատ քիչ մարդ է յօժար կամքով կնքահայր լինել յանձն առնում:

2, Կամաւոր տուրք պսակի համար, որ լինում է երեք մասից, փեսացուի, հարսնացուի և խաչեղբօր տուածից. ինչ որ ասացինք կնքահօր մասին, նոյնը վերաբերում է նաև խաչեղբօրը, դեռ այստեղ դժուարութիւնն աւելի մեծ է, որովհետև խաչեղբօր պարտաւորութիւնները քանի մի անգամ աւելի մեծ են, քան կնքահօրը:

3, Կամաւոր տուրք թաղման համար:

4, Տնօրհնէք, տարին երկու անգամ՝ ծննդեան և Զատիկին:

5. Գերեզմանօրհնէք, հինգ մեռելոցներին:

6. Ժամոց, որ շրջեցնում են եկեղեցիներում իւրաքանչիւր պատարագի օրերին:

Քացի սոցանից կան նաև երկրորդական տեսակ տեսակ տուրքեր, որոնք այնքան բաղմազան են և աննշան, որ անելորդ ենք համարում թուել:

Մենք առաջարկում ենք այս ամեն կամաւոր և անորոշ տուրքերը վերացնել և ժողովրդի ամեն ծիսակատարութիւնները պարտադիր կերպով ճշի կատարել, հոգւոյն սրբոյ շնորհը ձրի ընդունած լինելով ձրիաբար էլ մատակարարել հաւատացեալ ժողովրդին: Իսկ դորա փոխարէն մենք առաջարկում ենք հետևեալ միջոցը.

Ամենից առաջ իւրաքանչիւր քաղաքի բոլոր եկեղեցիների ծխականների ներկայացուցիչներից ժողով կազմելով ընտրել մի կենտրոնական վարչութիւն՝ երեք հոգևորականից և երեք աշխարհականից բաղկացած, որ պէտք է տնօրինէ եկեղեցական բոլոր սպասաւորներին՝ քահանաներին, սարկաւազներին և դպիրներին ռոճիկ մատակարարել:

Կենտրոնական վարչութիւնն այդ նպատակին հասնելու համար հետևեալ նախապատրաստական գործողութիւններն է կատարում.

Նա՛ն՝ կազմում է քաղաքի բոլոր հայ ազգաբնակութեան ամենաճիշտ և մանրամասն ցուցակը, օգտուելով քաղաքային վիճակագրական տեղեկութիւններից և առաջիկայ միօրեայ ժողովրդագրութեան արդիւնքներից, այդ գործին շատ փոքր մասամբ կարող են օժանդակել նաև հոգևոր ատենաներում գտնուած ծխական ցուցակները, որոնք, ինչպէս ապացուցուեցաւ վերջին ընտրութիւնների ժամանակ, միանգամայն անստոյգ են: Այդ ցուցակը, որ մի մեծ հատար կլինի և կարող է նոյն իսկ հայ ազգագրութեան պատմութեան համար մի ընտիր նիւթ լինել, պէտք

է տպուած լինի և բաժանուած ամեն եկեղեցիների և այլ հաստատութեանց:

Երկրորդ՝ բոլոր ծուխը բաժանում է չորս դասակարգի՝ աղքատ, ստորին, միջին և բարձր կարողութեան տէր:

Երրորդ՝ աղքատ դասակարգը միանգամայն ազատում է ամեն տեսակ տուրքերից:

Չորրորդ՝ պատրաստում է քահանաների, սարկաւազների և դպիրների ցուցակը, հոգևոր իշխանութեան տուած մշտական շտապի համեմատ:

Հինգերորդ՝ պատրաստում է ժապավինեալ մատեաններ և անդորրագրեր ամեն տեսակ տուրքերի համար:

Եւ վեցերորդ՝ տնօրինում է կազմակերպել ուճակի դրամարկը հետևեալ աղբիւրներից:

1, Մկրտութեան, պսակի և ննջեցեալի տէրերի ծասկատարութիւնից առաջ դիմելով վարչութեան կամ նորա հերթակալ անդամին տալիս են իրանց տուրքը կամ իրանց կարողութեան և կամ մասնաժողովի սահմանած չափով, նայելով թէ որ դասակարգին են պատկանում. վարչութեան անդորրագիրը ստանալով ծխատէր քահանան՝ առանց որևէ վարձատրութեան և պահանջի անտրտունջ կատարում է ծխական ծէսը:

2, Վարչութիւնը հետզհետէ ջանք է գործ դնում հ մոզ'լ իրան դիմող ծխականներին՝ այդ տեսակ անկանոն տուրքերի փոխանակ միանուագ տարեկան տուրք որոշել և հատուցանել, ըստ իւր կարողութեան կամ դասակարգութեան, որ սիրով կընդունէ ծխականը, քան ամեն անգամ որիէ գէպք պատահելիս նորանոր վճարումների: Այսպիսով քանի մի տարուց արդէն ծխի մեծամասնութիւնը կընտելանայ տարեկան որոշ տուրքի, որով և կ'թեթևանայ ապագայի գործը:

3, Ներկայումս ընդհանուր կարգ է դարձել, որ ա-

մեն եկեղեցի իւր արդիւնքից քիչ կամ շատ, 3 ռուբլուց սկսած մինչև 25 ռուբլի, ամսական ռոճիկ է տալիս դպիրներին և սարկաւազներին. արդ՝ քանի որ մեր առաջարկած եղանակով վերանում է այդ սովորութիւնը և դորանով եկեղեցու ծախքի գլխաւոր գոււը գոցոււմ; սահմանոււմ է որ եկեղեցական մոմաւաճառութեան արդիւնքի $\frac{2}{3}$ մասը յանձնուի կենդրոնական վարչութեան, իսկ մի երրորդը թողնուի եկեղեցուն, որ այլ արդեանց հետ միանալով լրացնոււմ է եկեղեցու այլ պէտքերը: Սորանով առաջն է առնոււմ նաև այն անբաւականութեանց, որ շարունակ տեղի ունի երեցփոխանների և քահանանների մէջ այն առիթով, որ երեցփոխանները դպիրներին ու սարկաւազներին, իբրև իրանցից ռոճիկ ստացողների, իրանց են ուզում հպատակեցնել, իսկ քահանանները իրանց, որ, ըստ կոչման, ամենից արդարն է:

4, Քահանանների, սարկաւազների ե դպիրների գանձանակադրամների շրջեցնելը վերացնելով այդ ամենի փոխարէն իւրաքանչիւր եկեղեցու դրան սլատից միմիայն մի մի տուփ է կախոււմ, որի բոլոր արդիւնքը մտնում է կենդրոնական գանձարան:

5, Կենդրոնական գանձարանին են յատկացնոււմ նաև քաղաքային երեք հայ գերեզմանոցների արդիւնքները:

Այս բոլոր արդիւնքներից կենդրոնական վարչութիւնը նշանակում է ռոճիկ բոլոր քահանաններին համահաւասար առանց խտրութեան, ինչպէս նաև սարկաւազներին ու դպիրներին:

Մենք համոզուած ենք, որ այս դրութեամբ իւրաքանչիւր քահանայ շատ աւելի ռոճիկ կը ստանայ, քան այն արդիւնքները, որ ստանում է նա այսօր և գոհ կը մնան թէ ժողովուրդը և թէ ինքը քահանան:

Մտցնելով ռոճիկը հոգևորական կազմակերպութեան

մէջ՝ մենք մի օգուտ էլ կունենանք, մենք կարող ենք վերջի վերջոյ կազմել հայ ժողովրդի իսկական ազգահամարը, որպիսի նպատակի երկար տարիներից հետէ ձգտում է հոգևոր իշխանութիւնը, բայց մինչև այսօր անհետեանք է մնում. նոր կազմակերպութեամբ այն քահանան, որ այսօր ձգտում է 500 տուն ծովս ունենալ անլի արդիւնք ստանալու դիտատրութեամբ, երբ այլ ևս սուղակի ծխից արդիւնքի ակնկալութիւն չի ունենալ ինքը կաշխատէ քիչ ծովս ունենալ, անելորդ նեղութիւնից իրան զերծ պահելու համար. և այդ տեղից առաջ կգայ գարձեալ մի բարեբեր արդիւնք՝ ծխերի հաւասարութիւն, որի բացակայութիւնը մի յայտնի չարիք է այսօր հասարակութեան համար:

Վերադառնալով մեր յօդուածի գլխաւոր նպատակին՝ կը կրկնենք և կերեքկնենք, որ վարձատրութեան այս եղանակը դէպի քահանայական սուրբ կոչումը կը գրաւէ այն ամեն՝ դիտութեան պաշարով օժտուած անհատներին, որոնք զգում են իրանց մէջ հոգևորականի կոչում, բայց որոնք խոյս են տալիս միայն եւ միայն կամաւոր աւքատութեան չենթարկուելու պատճառով:

Եւ երբ մենք կունենանք լաւ քահանաներ, այն ժամանակ կարելի է ասել, որ հասած է մեր ազգի բարոյական փրկութեան ժամը:

Գիտա քահ. Աղաճեանց:

